ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/295

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Շինպլատֆորմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Շ. Հովսեփյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, զրուցարանների, նստարանների, աղբամանների և արգելափակոցների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19647-2020 գրությամբ «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.12.2020թ.-ի թիվ 25/01-25/25327 գրության հիման վրա, 28.12.2020թ.-ին «Շինպլատֆորմ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 28.12.2020թ.-ին:

29.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/295 համարի ծածկագիրը:

15.01.2021թ.-ին և 27.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.01.2021թ.-ին:

2. **<u>Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

Երևանի քաղաքապետարանը 21.12.2020թ.-ի թիվ 25/01-25/25327 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ՇԻՆՊԼԱՏՖՈՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 20.04.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրով նախատեսված Երևան

քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կարիքների համար ապրանքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Նշված պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 21 օրացույցային օր, այսինքն մինչև 10.05.2020թ.:

Սույն պայմանագիրը՝ 5157000 /հինգ միլիոն հարյուր հիսունյոթ հազար/ դրամի փոխարեն կատարվել է 3462000 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 1695000 /մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամի չափով ապրանքների մատակարարումներ, այսինքն պայմանագրով նախատեսված թվով 91 հատ մետաղյա աղբամաններ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1695000 ՀՀ դրամ, չեն մատակարարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Գնորդը խախտել է պայմանագրի 2.1.1 կետում նախատեսված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ

3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «ՇԻՆՊԼԱՏՖՈՐՄ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրը լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

3. «**<u>Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 29.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19647-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, 11.01.2021թ.-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ <<Շինպլատֆորմ>> ՍՊԸ-ն 20.04.2020 թվականին պայմանագիր է կնքել Երևանի քաղաքապետարանի հետ <<ԵՔ-ԳՀԱՊՁԲ-2 0/121-1>> ծածկագրով, համաձայն որի պետք է մատակարարեր ապրանքներ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կարիքների համար:

Արաբկիր վարչական շրջանի կողմից 21.12.2020 թվականին ներկայացվել է գրություն կից փաստաթղթերով՝ առաջարկելով <<Շինպլատֆորմ>> ՍՊԸ-ի նկատմամբ կիրառելու <<Գնումների մասին>> օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը՝ այն է՝ <<Շինպլատֆորմ>> ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սակայն ընկերությունը վերոնշյալի հետ կապված ունի առարկություններ.

1. <<Շինպլատֆորմ>> ՍՊԸ-ն հայտնում է, որ պայմանավորված աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ համավարակ) տարածման դեպքերի և այդ համավարակն Առողջապահական համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքով՝ ՀՀ-ում որոշվեց արտակարգ դրություն հայտարարել, որը գործում է մինչ օրս: Մեր կազմակերպությունում ևս գրանցվել են կորոնավիրուսային հիվանդությամբ համավարակի մի շարք դեպքեր, որոնք անհնարին են դարձրել աշխատակիցների կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքների մի մասի մատակարարումը Պայմանագրով սահմանված ժամկետներում:

2. Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ Կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ողջ տարածքում հայտարարվել է ռազմական դրություն, որը նույնպես շարունակվում է մինչ օրս: Վերոնշյալ որոշման Հավելվածի 1-ին գլխի համաձայն՝ ՀՀ-ում հայտարարվում է ընդհանուր զորահավաք և մինչև 55 տարեկան պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչ, որին ներգրավվել են մեր ընկերության աշխատակիցները, որի հետևանքով էլ կասեցվել են աշխատանքները:

ՀՀ-ում 2020 թվականի ընթացքում հայտարարվել է արտակարգ դրություն և ռազմական դրություն, այսինքն ֆորս-մաժորային իրավիճակ:

ՀՀ ՔՕ 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

3. Ինչպես նաև հարկ եմ համարում տեղեկացնել, որ Պատվիրատու կողմից 30.12.2020 թվականին տեղեկագրում հրապարակվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 21.12.2020 թվականին թիվ 25/01-25/25327 գրությամբ:

Այսպիսով՝ Պայմանագրի 8-րդ կետի 8.11 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին, որը սահմանված է նաև կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 31.12.2020 թվականից: Սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ 25/01-25/25327 գրությամբ ուղարկել է լիազորված

մարմնին 21.12.2020 թվականին, վերջինս էլ նախաձեռնել է <<Շինպլատֆորմ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ առանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած հիմքի: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին 23-րդ կետի, ՀՀ կառավարության 05.04.2017թ. 526-Ն որոշման, նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 45-րդ կետի և 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ հստակ կարգավորվում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով: Ընդ որում՝ ժակմետների սահմանումը ինքնանպատակ չէ և հստակ կապված է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ:

Հետևաբար ընկերությունը կարող էր ակնկալել, որ այդպիսի գործընթաց իր նկատմամբ չի նախաձեռնվի, քանի դեռ ինքը պատշաճ ծանուցված չէ:

Այս մասով հայտնում եմ, որ կան գնումների հետ կապված բողոքը քննող անձի նախադեպային որոշումներ՝ նույն փաստարկներով և հանգամանքներով, օրինակ՝ թիվ ՍՅ-ՆԳ-2020/264 առ 20.04.2020թ., թիվ ՍՅ-ՆԳ-2020/257 առ 15.12.2020թ. և այլն:

Խնդրում եմ Ձեզ, հիմնվելով վերոգրյալ առարկությունների և ներկայացված փաստերի վրա, <<Շինպլատֆորմ>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը մերժել:»:

4. **<u>ՍՅ-LO</u>**-2020/295 **<u>ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ Մասնակիցը պետք է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրը ներառյալ մատակարարի 1 հատ զրուցարան, 91 հատ աղբաման և 262 հատ ուղեփակոց:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 30.12.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 25/01-25/25329 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կարիքների համար ապրանքներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Նշված պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 21 օրացույցային օր, այսինքն մինչև 10.05.2020թ.:

Սույն պայմանագիրը՝ 5157000 /հինգ միլիոն հարյուր հիսունյոթ հազար/ դրամի փոխարեն կատարվել է 3462000 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 1695000 /մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամի չափով ապրանքների մատակարարումներ, այսինքն պայմանագրով նախատեսված թվով 91 հատ մետաղյա աղբամաններ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1695000 ՀՀ դրամ, չեն մատակարարվել:

Վերը նշված պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Գնորդը խախտել է պայմանագրի 2.1.1 կետում նախատեսված ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ի

դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19647-2020 գրությամբ «Շինպլատֆորմ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ

իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում

արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ Մասնակիցը պետք է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրը ներառյալ մատակարարի 1 հատ զրուցարան, 91 հատ աղբաման և 262 հատ ուղեփակոց:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 30.12.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 25/01-25/25329 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 21 օրացույցային օր, այսինքն մինչև 10.05.2020թ.:

Նույն պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Գնորդը խախտել է պայմանագրի 2.1.1 կետում նախատեսված ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի, միակողմանի մասնակի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքի մի մասի չմատակարարելը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հաշվի առնելով այն, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թվականի մարտին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակ, և ամբողջ աշխարհում համաճարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված, այն, որ Հայաստանի Հանրապետությունում ևս հիվանդությունը ստացել է լայնածավալ տարածում, և երկրում առաջացել է համաճարակ՝ հիմք հանդիսանալով արտակարգ իրավիճակի առաջացման, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.09.2020թ.-

ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 17:00-ից մինչև 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514-Ն որոշումը, ինչպես նաև պայմանավորված՝ ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Բողոքներ քննող անձը վերոնշյալները քննարկելով նաև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ արտակարգ դրությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է, որը սահմանվում է պետության ամբողջ տարածքում կամ առանձին հատվածներում ներքին և արտաքին վտանգներից պաշտպանվելու, ինչպես նաև երկրի սահմանադրական ու հասարակական կարգը պահպանելու նպատակով (հոդված 1): Արտակարգ դրության ռեժիմն ենթադրում է քաղաքացիների, իրավաբանական անձանց ազատությունների և իրավունքների սահմանափակում, ինչպես նաև նրանց համար լրացուցիչ պարտականությունների սահմանում (հոդված 4):

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար

ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումը իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումն ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության և կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակի հանգամանքներով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19647-2020 գրությամբ «Շինպլատֆորմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/295 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ